Հավելված N2

ՀՀ բնապահպանության նախարարի
2014թ նոյեմբերի << 18 >>-ի
N 347-Ն հրամանի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
/նախատեսվող գործունեության/

ՏԱ --08--

<<--22-->> ----01---- **2021թ.**

Սույն առաջադրանքը կազմված է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների համաձայն և հիմք է հանդիսանում նախատեսվող Ա կամ Բ կատեգորիայի գործունեության՝ փորձաքննության հիմնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության մշակման համար՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների.

1. Ձեռնարկողի անվանումը և հասցեն՝	«Ռիտուալ» ՍՊԸ ՀՀ, Սյունիքի մարզ Կապան Ղ, Սպանդարյան փողոց 8/7:
2. Նախատեսվող գործունեությունը և նրա կատեգորիան՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 9-րդ կետի ա)ենթակետի դասակարգվում է Ա կատեգորիայի:
3. Ազդակիր համայնքը (ները)	Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայր:
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում դիտարկվող օբյեկտները և բնութագրերը նախատեսել համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերի	Շրջակա միջավայրի վրա գնահատման իրականացման գործընթացում դիտարկել Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերը: Դիտարկել նաև շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հող, ջուր, կենդանական և

	բուսական աշխարհ), անտառային տարածքի, պատմության և մշակույթի հուշարձանների, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նկարագիրը, ֆիզիկական ազդեցությունները, աղտոտվածության մակարդակը (ֆոնային տվյալներ):
5. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը նախատեսել համաձայն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերի	Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերին: Ներառել նաև հետևյալ տեղեկատվությունը՝ համապատասխան հիմնավորումներով. -Նախատեսվող գործունեության ներկա վիճակի նկարագիրը: -Նախատեսվող նախագծային լուծումների հնարավոր այլընտրանքային տարբերակները, ներառյալ գործունեությունից հրաժարման (զրոյական), ընտրված տարբերակը: -Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները 27.05.2015թ. N 764-Ն ՀՀ կառավարության որոշման համաձայն: - Նախատեսվող գործունեության և նրա հարակից տարածքներում՝ Կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական աշխարհը, կենսաբազմազանությունը, բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումները, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29.01.2010թ. ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գիրքն հաստատելու մասին համապատասխանաբար N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N 781-Ն որոշումների պահանջներով, համապատասխան հիմնավորումներով (մասնագիտական եզրակացություն, գրականություն և այլն): - Կենդանական ու բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները (մասնավորապես պոպուլյացիաների փոփոխության, կենդանիների ձվադրման և բնադրման, կենդանիների ապրելավայրերի կորստի, ծառերի հեռացման և վերատնկման և այլն), դրանց ուղղված

նախատեսվող միջոցառումները և մշտադիտարկումը:

- Գործունեության իրականացման ժամանակացույցը (սկիզբ, ավարտ):
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան նախնական համաձայնությունները, թույլտվությունները (էներգամատակարարում, աղբահեռացում, ջրամատակարարում և ջրահեռացում):
- Շինարարության ժամանակ առաջացող թափոնների կազմի քանակական բնութագրերը (շինաղբ, ասֆալտբետոն և այլ), քանակը, հավաքման վայրի մակերեսը, տեղադիրքը, ծավալները, տեղափոխման և պահպանման ձևերը, տեղափոխման վայրը (պոլիգոնի գտնվելու վայրը), հեռացման հաճախականությունը, աղմուկի նվազեցման, մշտադիտարկման մոնիթորինգի իրականացման և նախատեսվող համապատասխան միջոցառումները:
- Տեղումների ժամանակ առաջացած շինարարական հոսքաջրերի անձրևային կոյուղու ցանց, հեռացնելու ձևը, համապատասխան ցուցանիշները (երկարություն, քանակ, ծավալ և այլն):
- Կանաչապատման ընդհանուր մակերես, ծառերի քանակ, տեսակ, սիզամարգեր և այլ բուսատեսակներ, հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի <<Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 108-Ն որոշման դրույթները:
- Կանաչ տարածքների ոռոգման ցանցի բնութագիրը, ոռոգման աղբյուրը, անհրաժեշտ ջրի ծավալը, ջրի մատակարարման բավարարությունը, եղանակը, (խողովակաշարի երկարություն, տրամագիծ) թույլտվությունը,
- Գործունեության իրականացման արդյունքում սոցիալական գործոնների նկարագրությունը, հողի ձեռք բերման հնարավոր դեպքերը, ծախսերը, ռիսկերի և հնարավոր բացասական ազդեցությունների գնահատումները, դրանց փոխհատուցմանն ուղղված միջոցառումները:

	- Արտակարգ իրավիճակների և դրանց արձագանքնմանը, կանխարգելմանն ուղղված միջոցառումները: - Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված բոլոր միջոցառումները (շինարարության և շահագործման փուլ, արտակարգ իրավիճակներ և այլն)՝ բենզինի, քսայուղերի հնարավոր ներթափանցում հողային և ջրային ռեսուրսների մեջ, տրանսպորտի արտանետումների, վտանգավոր նյութերի արտահոսք և այլն: - Նախատեսվող բոլոր միջոցառումները ներառել միջոցառումների ծրագրում, ներկայացնել դրանց իրականացման ժամանակացույցը, միջոցառումներին ուղղված ծախսերի գումարային գնահատումները (նաև աղյուսակային տեսքով):
6. Համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացության կամ կարծիքի վերաբերյալ պահանջը՝	
7. Գործընթացի մասնակիցները համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, արտակարգ իրավիճաների, առողջապահության, պաշտպանության, շրջակա միջավայրի նախարարություններ, Կապան համայնք, շահագրգիռ հանրություն:
8. Հանրության ծանուցումը և քննարկումների իրականացումը կատարել համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերի, 3-րդ մասի, 5-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի և <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 19.11.2014թ N1325-Ն որոշման	ՇՄԱԳ հաշվետվության փուլի հանրային ծանուցումը և քննարկումները իրականացնել Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարանի, շահագրգիռ հանրության մասնակցությամբ, քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը կցել հաշվետվությանը:
9. Պետական տուրքի չափը՝	Համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 2014թ. հունիսի 21-ի <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքում լրացում

	կատարելու մասին 1-ին հոդվածի՝ Ա կատեգորիայի գնահատման հաշվետվության փորձաքննության իրականացման համար՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
10. Ստացողը և հաշվի համարը՝	Ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունք՝ 900005000196:
11. Վճարման նպատակը՝	Նախատեսվող գործունեության փորձաքննության գործընթացի իրականացման համար:
12. Փորձաքննության հիմնական փուլի սկիզբը համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման	Նախատեսվող գործունեության փորձաքննության հիմնական փուլը սկսվում է տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմված հաշվետվությունը կից փաստաթղթերով՝ էլեկտրոնային և տպագիր տարբերակները (տուրքի անդորրագրի, հանրային քննարկումների արձանագրության, տեսաձայնագրության՝ կից մասնակիցների ցանկով), ձեռնարկողի կողմից լիազոր մարմնին ներկայացնելու պահից:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Գևորգյան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ Հ. Մեսրոպյան